ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

22.05.2015թ.
249-ի 2

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Երեւան քաղաքի ավագանու՝ 2014թ.-ի դեկտեմբերի 23-ի “Երեւան քաղաքային համայնքում տեղական տուրքերի 2015 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին” Հ 264 որոշման 1-ին մասի 9-րդ կետիհամաձայն՝ Երեւան քաղաքի վարչական տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը 2015թ.-ի համար սահմանվել է 5000 ՀՀ դրամ: Նշված տեղական տուրքը սահմանված է “Տեղական տուրքերի եւ վճարների մասին” ՀՀ օրենքով, որի 10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ “Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0-5 000 դրամ”:

Ելնելով վերոգրյալից, առաջնորդվելով իրավական ակտի՝ պատճառաբանված լինելու սկզբունքից, իրավական որոշակիության եւ կայունության սկզբունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ինչու՞ է Երեւան քաղաքի վարչական տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար սահմանվել օրենքով նախատեսված առավելագույն դրույքաչափով տեղական տուրք (խնդրում ենք ներկայացնել առավելագույն դրույքաչափի ընտրության հիմնավորումը):
2. Երեւան քաղաքի վարչական տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը որքա՞ն է սահմանված եղել 2014թ.-ի համար,
3. Որքա՞ն գումար է գանձվել ՀՀ քաղաքացիներից 2014թ.-ին՝ որպես Երեւան քաղաքի վարչական տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տուրք,
4. Որքա՞ն գումար է գանձվել ՀՀ քաղաքացիներից 2015թ.-ի հունվարի 1-ից մինչեւ 2015թ.-ի մայիսի 20-ը ներառյալ՝ որպես Երեւան քաղաքի վարչական տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տուրք,
5. Ո՞ր կենդանիներն են համարվում ընտանի (խնդրում ենք ներկայացնել “ընտանի կենդանի” եզրույթի իրավական սահմանումը, ինչպես նաեւ նշել արդյոք ակվարիումային ձկները, մկները, ծովախոզուկները եւ այլն, հավերը,

աղավնիները եւ այլն համարվու՞մ են ընտանի կենդանիներ եւ եթե այո, ապա արդյոք պե՞տք է դրանցից յուրաքանչյուր 1-ի (1 ձկան, 1 հավի եւ այլն) համար վճարվի 5000-ական ՀՀ դրամ տուրք),

6. Ո՞վ է կրում տուրք վճարելու պարտականությունը, ո՞վ է համարվում ընտանի կենդանի տիրապետող (խնդրում ենք ներկայացնել “ընտանի կենդանի տիրապետող” եզրույթի իրավական սահմանումը), ո՞վ է համարվում ընտանի կենդանի տիրապետող բազմամարդ ընտանիքներում, կարո՞ղ է արդյոք մինչեւ 14 կամ 18 տարեկան երեխան համարվել ընտանի կենդանի տիրապետող,
7. Բազմամարդ ընտանիքներում ո՞վ է գույքային պատասխանատվություն կրում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տուրքը չվճարելու դեպքում (օրինակ՝ ու՞մ գույքի հաշվին է բռնագանձվելու չվճարված տուրքի գումարը):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան